

Գարուն Սարգսյան

**ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»  
ՊԱՐՍԿԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ**

*Բանալի բառեր՝ հայ ժողովուրդ, պատմական աղբյուրներ, թարգմանություն, պարսկերեն, Գրիգոր Ակներցի, մոնղոլներ, թաթարներ*

Հայ ժողովուրդն իր բազմադարյա պատմության ընթացքում կերտել է ահռելի նյութական և ոչ նյութական արժեքներ, որոնցից մեկը պատմական մատենագրությունն է: Մեսրոպատառ մատենագրությունը սկզբնավորվել է 5-րդ դարում և թողել է հարուստ ժառանգություն, որը շատ բարձր է գնահատվել գիտական աշխարհում: Պարսիկ խոշոր գիտնական Սայիդ Նաֆիսին 1931 թ., իր մի հոդվածում անդրադառնալով այս հարցին, ասում է. «Հայ ժողովուրդը, սկսած Արշակունիների թագավորության կեսերից, մոտ 1500 տարիներ գրել է պատմական գրքեր, և քանի որ Հայաստանի դեպքերը շատ խիստ առնչություն ունեն հրանի դեպքերի հետ, ուրեմն կարելի է հայ պատմիչների գրքերը օգտագործել այս երկար ժամանակաընթացքը լուսաբանելու համար: Այս գրքերի քանակը շատ է, և ամեն մեկը կարոտ է առանձին հոդվածի»<sup>1</sup>:

Արդեն 90 տարիներ են անցել այդ հոդվածի տպագրության ժամանակից, և թեկուզ հայ մեծաքանակ մատենագրությունը դեռ սակավաթիվ է թարգմանվել պարսկերենի, սակայն վերջին տասնամյակում նկատվում է լուրջ դրական տեղաշարժ: Արդեն Թեհրանում պարսկերեն թարգմանությամբ հրատարակվել են հայ մատենագիրների գրչին պատկանող մի քանի արժեքավոր մատյաններ, որոնցից կարելի է նշել հետևյալները.

1. Աբրահամ Երևանցի, Պատմություն պատերազմացն, թարգմ. Ֆաթեմե Օրուջի, Թեհրան, 2012<sup>2</sup>: Սա թարգմանվել է Ջորջ Բուրնոյանի անգլերեն թարգմանությունից:
2. Աբրահամ Կրետացի, Պատմագրություն, թարգմ. Ֆաթեմե Օրուջի, Թեհրան, 2017<sup>3</sup>: Սա ևս թարգմանվել է Ջ. Բուրնոյանի անգլերեն թարգմանությունից:
3. Սեբեոս եպիսկոպոս, Պատմություն, թարգմ. Մահմուդ Ֆազելի Բիրջանդի, Թեհրան, 2017<sup>4</sup>: Թարգմանությունը կատարվել է Ռոբերթ Թամսոնի անգլերեն թարգմանությունից:

1- نفیسی، سعید. «منابع تاریخ ایران پیش از اسلام و مورخین ارمنی»، مجله شرق، بهمن 1309، شماره دوم، دوره

اول.

2- أبراهام ایروانی. تاریخ جنگها، ترجمه فاطمه اروجی، پژوهشکده تاریخ اسلام، تهران، 1391.

3- أبراهام کرتاتسی، کاتولیکوس أبراهام کرتی، تاریخ من و نادر، شاه ایران، ترجمه فاطمه اروجی، طهوری، تهران،

1396.

4- سبئوس. تاریخ سبئوس، ترجمه محمود فاضلی بیرجندی، ققنوس، تهران، 1396

4. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, որը մինչ այժմ թարգմանվել է 3 տարբեր անձանց ձեռքով, որոնք են Աբրահամ Հովհասափյանը<sup>5</sup> (1952), Գեորգի Նալբանդյանը<sup>6</sup> (1989) և Էդիկ Բաղդասարյանը<sup>7</sup> (2001): Երեքն էլ թարգմանվել են հայերենից:

5. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ. Քոլտում Ղազանֆարի և Ջամշիդ Ղահրամանի, Թեհրան, 2018<sup>8</sup>: Թարգմանությունը կատարվել է Չարլզ Դովսեթի անգլերեն թարգմանությունից:

Ինչպես ասվեց, վերոհիշյալ թարգմանությունները կատարվել են անգլերենի միջնորդությամբ և, ըստ իս, որոշ չափով տուժել են այս հանգամանքից, քանի որ թարգմանիչները, լինելով պարսիկ և չիմանալով հայերեն, թույլ են տվել որոշ անճշտություններ:

Հայերենից պարսկերեն թարգմանված մատենագրության շարքից կարելի է հիշատակել նաև մեր կատարած հինգ թարգմանություններ, որոնք են՝ Ազաթանգեղոսի «Պատմություն Հայոց»<sup>9</sup> (2001), Կորյունի «Վարք Մաշտոցի»<sup>10</sup>, (2002), Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոց»<sup>11</sup> (2003), Գրիգոր Ակնեբցու «Պատմություն վասն ազգին նետողաց»<sup>12</sup> (2018) և Արիստակես Լաստիվերցու «Պատմություն»<sup>13</sup> (2019) մատենագրական աշխատությունները: Ընդ որում, Ազաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի Հայոց Պատմությունները վերահրատարակվել են 2018 թ.: Արդեն մամուլի տակ է գտնվում նաև Ղազար Փարպեցու Պատմություն Հայոցը և Թուրթ առ Վահան Մամիկոնյանը:

Վերոհիշյալ երկերի հրատարակումը պարսկերենով մեծապես նպաստում է պարսիկ մտավորականությանն ավելի լավ ճանաչելու բարեկամ հայ ժողովրդին, նրա պատմությունը և մշակույթը, ինչու չէ, նաև պարսից պատմությունը: Հայ պատմիչների հաղորդած տեղեկությունները Իրանի և հարևան ժողովուրդների մասին չափազանց արժեքավոր նյութեր են տրամադրում այդ երկրների պատմությունը և մշակույթը ավելի լայն լուսաբանելու համար:

Այժմ անդրադառնանք Գրիգոր Ակնեբցու «Պատմության» պարսկերեն թարգմանությանը և որոշ տեղեկություններ հաղորդենք դրա մասին: Սույն թարգմանությունը պարունակում է 133 էջ և բաղկացած է թարգմանչի նախա-

5- موسى خورنى. تاريخ ارمنستان، ترجمه أبراهام هواساپيان، به اهتمام ابراهيم دهگان، انتشارات روزنامه افق، اراك،

1331

6- موسى خورنى. تاريخ ارمنستان، ترجمه گئورگى نعلبنديان، دانشگاه ايروان، 1989.

7- موسس خورناتسى. تاريخ ارمنيان، ترجمه ادبيک باغدادساريان، تهران، 1380.

8- موسى داسخور انتسى، تاريخ البانيايىهاى قفقاز، ترجمه كلثوم غضنفرى و جمشيد قهرمانى، تهران، دانشگاه تهران،

1397.

9 - آگاتانگوس. تاريخ ارمنيان، ترجمه گارون ساركسيان، انتشارات نائيرى، تهران، 1380.

10- كوريون. زندگى مسروپ ماشوتوس، ترجمه گارون ساركسيان، انتشارات نائيرى، تهران، 1381.

11- پاستوس بوزند. تاريخ ارمنيان، ترجمه گارون ساركسيان، انتشارات نائيرى، تهران، 1383.

12- گريگور آكنرتسى، تاريخ تاتارها، قوم تيرافكن، ترجمه گارون ساركسيان، تهران، نائيرى، 1397.

13- آريستاكس لاستيورتنسى، تاريخ آريستاكس، ترجمه گارون ساركسيان، تهران، نائيرى، 1398.

բանից (էջ 5-8), հայերեն հրատարակության առաջաբանից (էջ 9-22), բնագրի թարգմանությունից ու ծանոթագրություններից (էջ 23-104), Ակներցու հիշատակարանից (էջ 105-113), օգտագործած աղբյուրների և գրականության ցանկից (էջ 114-115), հատուկ անունների ցանկից (էջ 116-126), երկու էջ բնագրի 1870 թ. Երուսաղեմի տպագրությունից և հայերեն ու անգլերեն անվանաթերթերից:

Թարգմանիչը գրքի սկզբում զետեղած իր հակիրճ նախաբանում տեղեկություններ է տալիս Գրիգոր Ակներցու կյանքի և գործունեության, ինչպես նաև «Պատմության» հայերեն հրատարակությունների ու թարգմանությունների մասին: Նա պարսիկ ընթերցողների ուշադրությունն է հրավիրում այն բանին, որ գիրքը ի շարս այլ կարևոր դեպքերի անդրադառնում է նաև Պարսկաստանում իշխող Իլխանների ու Կիլիկյան հայկական պետության միջև գոյություն ունեցող փոխհարաբերություններին: Այս առումով, գիրքն արժեքավոր աղբյուր է համարվում նաև Իրանի պատմությունը ուսումնասիրելու համար:

Նշել ենք նաև, որ երկի հայերեն հրատարակությունը ընդգրկում է արժեքավոր առաջաբան, որը պատկանում է երկի՝ գրաբարից աշխարհաբար թարգմանիչների՝ բ.գ.դ. Գուրգեն Խաչատրյանի և բ.գ.դ. Վանո Եղիազարյանի գրչին:

Թարգմանիչի հակիրճ նախաբանից հետո գրքում տեղ է գտել հայերեն հրատարակության առաջաբանը, որը բացառությամբ մի քանի նախադասությունների, որոնք արծարծում են գրաբար տեքստի մի շարք քերականական և շարահյուսական խնդիրներ, ամբողջությամբ թարգմանվել է պարսկերենի և տեղադրվել գրքի 9-22-րդ էջերում: Առաջաբանի հեղինակներն անդրադարձել են պատմությանն առնչվող տարբեր թեմաների, որոնք են՝ Ակներցու կյանքն ու գործունեությունը, պատմության պատմագիտական արժեքը, պատմության զեղարվեստական արժեքը, պատմության ձեռագիր տարբերակները և հրատարակությունները:

Տողերիս հեղինակը, թարգմանելով այս առաջաբանը, նպատակ է ունեցել պարսիկ ընթերցողներին բազմակողմանիորեն ծանոթացնելու Ակներցուն և նրա երկին: Առաջաբանում մեկ անգամ ևս ասվում է, որ պատմության հեղինակը ոչ թե Վարդան Արևելցին կամ Մաղաքիա արեղան է, այլ Գրիգոր Ակներցին՝ Կիլիկիայի Ակներ կամ Ականց վանքի միաբանը և Վանական վարդապետի աշակերտը: Այստեղ շատ կարևոր ակնարկ կա այն մասին, որ թաթարմոնղոլական տիրապետության ժամանակաշրջանը թեև հայ ժողովրդի պատմության ամենամռայլ էջերից է, սակայն միշտ չէ, որ այդ տիրակալները վարել են կոտորածի, ավերածության, գերեվարության և հավատափոխության քաղաքականություն: Հենց այս ավերումների ժամանակաշրջանում եղել են նաև կառուցումներ, և օրինակ է բերվում Լոռու մարզի Դսեղ գյուղի մերձակայքում կառուցված Քառասնից Մանկանց եկեղեցու երկարատև կառուցումը: Նաև միշտ չէ, որ թաթարմոնղոլների նկատմամբ հայ ժողովրդի վերաբերմունքը եղել է բացասական: Հայ մատենագրության մեջ հանդիպում ենք դրվատանքի բազմաթիվ խոսքերի, որոնք արտահայտված են մոնղոլների

տիրապետության հատկապես առաջին շրջանի քրիստոնեամետ խաների և իշխանավորների մասին:

Առաջաբանից հետո տրվում է բուն պատմության թարգմանությունը: Երկը ընդգրկում է 1220-1273-ի ժամանակաշրջանը և բաղկացած է 17 գլուխներից: Ակներցին, լինելով 13-րդ դարի պատմիչ, ժամանակակից է եղել մի շարք կարևոր դեպքերի, որոնք են՝ մոնղոլների Անդրկովկասյան արշավանքները, նրանց պատերազմը Իկոնիայի սելջուկների հետ, Աբբասյան խալիֆայության մայրաքաղաք Բաղդադի գրավումը, Մոսթասամի՝ վերջին խալիֆայի սպանությունը, մոնղոլների և Եգիպտոսի մամլուքների պատերազմը 1260-ին, Կիլիկիայի հայկական գործերի և Եգիպտոսի մամլուքների պատերազմը 1266-ին, գոյություն ունեցող բարդ ու բազմակողմանի հարաբերությունները մոնղոլների, մամլուքների և Կիլիկիայի հայկական թագավորության միջև և այլն: Ակներցին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև մոնղոլների կրոնի, կենցաղի ու սովորությունների մասին:

Ակներցու աշխարհաբարի թարգմանիչները հայերեն հրատարակությունը հարստացրել են բազմաթիվ ծանոթագրություններով, որոնք տեղ են գտել գրքի վերջում: Պարսկերեն թարգմանության մեջ մենք օգտվել ենք այդ ծանոթագրություններից, թարգմանել ենք պարսկերենի և տեղադրել տողատակերում: Չեն թարգմանվել միայն այն ծանոթագրությունները, որոնք վերաբերում են գրաբար բնագրի քերականության և կետադրության հարցերին և շահեկան չեն պարսիկ ընթերցողի համար:

Թարգմանիչը, նկատի ունենալով, որ պարսկալեզու ընթերցողները, չլինելով հայ, աղոտ պատկերացում ունեն հայկական տեղանունների, պատմական դեպքերի և բուն հայկական խնդիրների մասին, ջանացել է համապատասխան ծանոթագրություններով բավարարել նրանց պահանջը և հարկ եղած դեպքում սովել է հավելյալ բացատրություններ: Օգտվելով հայ և օտարալեզու պատմիչների սկզբնաղբյուրներից՝ պարսկերեն թարգմանության մեջ աշխատել ենք ավելի լայն լուսաբանել «Պատմության» մեջ տեղ գտած իրադարձությունները: Օգտագործված են լրացուցիչ արաբական, պարսկական և վրացական աղբյուրներ, ինչպես նաև՝ Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» 3-րդ հատորը: Իսկ որպեսզի թարգմանչի և հայերեն հրատարակության ծանոթագրությունները զանազանվեն միմյանցից, թարգմանչի բացատրությունները ներառվել են անկյունավոր փակագծերում և մատնանշվել պարսկերեն Մ տառով, այսինքն՝ «մոթարջեն» (թարգմանիչ): Թարգմանչի հավելած ծանոթագրությունների քանակը մոտ 180 է: Հայերեն տեքստում բոլոր ծանոթագրությունները բերվել են գրքի վերջում, իսկ պարսկերեն թարգմանության մեջ բերել ենք տողատակում:

Անկյունավոր փակագծերը կիրառել ենք նաև թարգմանությունն ավելի սահուն ու հստակ դարձնելու համար, այնպես որ անկյունավոր փակագծերում

առնված բառերը մեր կատարած հավելումներն են՝ ընթերցվածը և իմաստը պարզ դարձնելու նպատակով:

Ուշադրություն է դարձվել մասնավորապես հատուկ անունների տառադարձությանը: Բնագրի հատուկ անունները բերվել են նույն տառադարձություններով, իսկ տողատակում տրվել է դրանց պարսկերեն ընդունված ձևը: Այդպիսով, հայերեն բնագրի Հուլավուն պարսկերենում չի դարձել Հուլաքու, Գանձակը՝ Գյանջե, դանը՝ խան և այլն: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ հայերեն մի շարք հնչյուններ անհնար է հարազատորեն արտահայտել պարսկերեն տառերով: Պարսկերենում չկան ծ, կ, ձ, ճ, պ, տ, ց հնչյուններին համապատասխան տառեր: Հետևաբար նմանատիպ հնչյուններ ունեցող բառերը հնարավոր չէ ճշգրտորեն արտահայտել պարսկերենով: Բացի այդ, մինչ այժմ չկա բոլորի կողմից ընդունված պարսկերեն տառերով հայերեն տառադարձության համակարգ: Թարգմանության մեջ նման տառերի փոխարեն օգտագործել ենք մոտավոր հնչյուններ: Օրինակ՝ Մածնաբերդը արտահայտել ենք որպես Մաթսնաբերդ, Կարինը՝ Քարին, Գանձակը՝ Գանզակ, Սմբատը՝ Սմբաթ և այլն:

Ակներցու պատմության մեջ աչքի են ընկնում մեծ քանակությամբ մոնղոլա-թուրքական անուններ ու տերմիններ: Մենք ջանացել ենք տալ բոլոր նմանատիպ բառերի բացատրությունը և մեկնաբանել դրանք ըստ Քլիվզի հրատարակած հոդվածի<sup>14</sup>: Այսպես, Ղարա Բուղան մեկնաբանվել է որպես Սև եզ, Չաղաթայը՝ սպիտակադեմ, Սային դանը՝ բարի դան, Միդանը՝ միս, Արդամուրը՝ երկաթե մարդ, Բերքեն՝ խիստ ու կոշտ և այլն:

Ակներցին պատմական իրադարձությունները թվագրում է հայկական տոմարով: Պարսկերեն թարգմանությունում նշանակել ենք ժամանակակից թվագրության համապատասխան տարիները, տվել ենք նաև որոշ կարևոր դեպքերի իսլամական հիջրայի թվականները:

Թարգմանության մեջ ուշադրություն է դարձվել նաև շարադրանքի լեզվին ու ոճին: Թարգմանիչը աշխատել է հնարավորինս գործածել պարսկերեն անաղարտ լեզուն, տեքստը զերծ պահել արաբերեն բառերից և դրանց փոխարեն օգտագործել պարսկերեն հոմանիշներ: Աշխատել է, որ լեզուն սահուն և հստակ լինի:

Թարգմանության մեջ կրճատումներ չեն կատարվել:

Հաջորդ բաժնում՝ գրքի 105-113-րդ էջերում, ընդգրկված է հայերեն հրատարակությունում տեղ գտած հավելվածը: Այս հավելվածը Միքայել Աստրու ժամանակագրության հիշատակարանն է՝ գրված Գր. Ակներցու ձեռքով:

---

<sup>14</sup> Francis Woodman Cleaves, *The Mongolian Names and Terms in The History of The Nation of The Archers* by Grigor of Akanc., *Harvard Journal of Asiatic Studies*, Vol. 12, No. 3/4 (Dec., 1949), pp. 400-443.

Միք. Ասորու երկը 1248 թ. թարգմանվել է հայերենի Իշոխ քահանայի և նրա աշակերտ Վարդան Արևելցու ձեռամբ: Ակներցին այն ընդօրինակել է 1273 թ. և նրան կցել է մի հիշատակարան: Ակներցու երկի աշխարհաբարի թարգմանիչները՝ Գ. Խաչատրյանը և Վ. Եղիազարյանը, այս հիշատակարանը ևս վերածել են աշխարհաբարի և ընդգրկել հայերեն հրատարակության մեջ: Հիշատակարանը պարունակում է նաև մի շարք տեղեկություններ թաթարների ծագման ու նախնական պատմության մասին, որոնք գրեթե ամբողջությամբ տեղ են գտել բուն պատմության տարբեր գլուխներում:

Գրքի վերջում տրված է օգտագործած աղբյուրների և գրականության ցանկը: Այդ ցանկում հանդիպում ենք օտարազգի մի քանի հեղինակավոր պատմիչների, որոնցից են Իբն-ալ-Էբրին՝ նույն «Աբուլֆարաջ Բար Հեբրատուր», Իբն-ալ-Ասիրը, Հաֆեզ Աբրուն, Աբուալֆեդան, ինչպես նաև հայ պատմիչներ Սմբատ Սպարապետը, Վարդան Արևելցին, Հեթում պատմիչը և Կիրակոս Գանձակեցին:

Պարսկերեն թարգմանությունը նախ կատարվել է Երուսաղեմի<sup>15</sup> 1870 թ. հրատարակության հիման վրա, հետո թարգմանիչը, ձեռք բերելով Նորայր Պողարյանի քննական բնագիրը<sup>16</sup>, իսկ ավելի ուշ՝ 2011 թ. Երևանում տպագրված աշխարհաբարի թարգմանությունը<sup>17</sup>, իր թարգմանությունը համեմատել և ճշգրտել է նշված բնագրերի հետ:

Ամփոփելով հոդվածը՝ մեկ անգամ ևս ընդգծում ենք հայ պատմագրական մատենագրության մեծ նշանակությունը թե՛ հայ ժողովրդի, թե՛ հարևան երկրների, հատկապես Իրանի պատմությունը լուսաբանելու գործում: Այս երկերի թարգմանությունը պարսկերենի մեծապես նպաստում է հայ-իրանական կապերի ամրապնդմանը, նաև գիտական շրջանառության մեջ է դնում հայ պատմիչների հաղորդած տեղեկությունները: Ինչպես վերևում ասվեց, այս թարգմանությունների մի մասը կատարվել է անգլերենի միջնորդությամբ և, ըստ իս, որոշ չափով տուժել է այս հանգամանքից, քանի որ թարգմանիչները, լինելով պարսիկ և չինանալով հայերեն, թույլ են տվել որոշ անճշտություններ: Ուրեմն ցանկալի է, որ թարգմանությունները կատարվեն հայերեն բնագրից:

Գրիգոր Ակներցու «Պատմության» պարսկերեն թարգմանությունը նպաստում է վերոհիշյալ նպատակների իրականացմանը և ձգտում է իր ինքնուրույն տեղը գտնելու պարսից պատմության սկզբնաղբյուրների շարքում:

<sup>15</sup> Պատմութիւն թաթարաց Վարդանայ պատմիչի, Երուսաղեմ, 1870:

<sup>16</sup> Գրիգոր վրդ. Ակներցի, Պատմութիւն Թաթարաց, Երուսաղեմ, տպարան սրբոց Յակոբեանց, 1974:

<sup>17</sup> Գրիգոր Ակներցի, Պատմություն նետաձիգների ազգի մասին, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գուրգեն Խաչատրյանի և Վանո Եղիազարյանի, Երևան, 2011:

Гарун Саркисян

ОБ ОСОБЕННОСТЯХ ПЕРСИДСКОГО ПЕРЕВОДА  
«ИСТОРИИ» ГРИГОР АКНЕРЦИ

Резюме

**Ключевые слова:** *Армяне, исторические источники, перевод, персидский, Григор Акнерци, монголы, татары*

Армяне за период своего существования, который насчитывается несколько тысяч лет, произвели много материальных и духовных ценностей. Одними из самых важных произведений являются исторические источники, полученные из первых рук. Данные исторические источники имеют особое значение, не только для Армении, но и для Ирана и соседних стран.

Один из указанных источников, называется «История народа стрелков» или «История татар», его написал Григор Акнерци в 13 веке. Гарун Саркисян недавно перевёл данную летопись на персидский язык, она издана в 2018 году в Тегеране. Данный источник богат информацией о монголах, государстве Хулагуидов, взаимосвязях монгольского государства с другими странами, мамлюкском султанате и Киликийском армянском государстве. Персидский перевод этой книги кроме подстрочных примечаний армянской версии (издание 2018), предоставляет обстоятельные объяснения для читателей на персидском языке.

Garun Sargsyan

ABOUT CHARACTERISTICS OF THE PERSIAN TRANSLATION  
OF “HISTORY” OF GRIGOR AKNERTSI

Summary

**Key words:** *Armenian, Historical Sources, Farsi, Translation, Grigor Aknertsi, Mongols, Tatars*

Armenians have created many materialistic and spiritual values throughout their many thousand years of history. First-hand historical sources being one of the most important among them. These resources are essential not only for Iran’s history but also for the history of Iran's neighbor countries.

One of the sources most recently translated by Garun Sargsyan into Farsi is “The History about the Nation of Archers” or “The History of the Tatars (Mongols)” by Grigor Aknertsi, an Armenian historian of the thirteenth century. This book was published in Tehran in 2018. This source provides valuable information on the Mongols, especially the establishment of the Ilkhanid dynasty in Iran, the occupation of Baghdad, the fall of the Abbasid caliphate, and the relationship between the Mongols, Egyptian kings and the Armenian kingdom of Cilicia. Farsi translation of this book, in addition to the precise footnotes of the Armenian version (published in 2011), also includes detailed explanations for Farsi-speaking readers.